



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տան օրերէն):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տակաւունքի և կիսատա-
կաների մասին. Նամակ Երևանից. Նամակ
Մոսկվայից. Նամակ Սեբաստիայից. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էրզրումի թղթակցութիւն.
Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակնարկներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԿԻՍԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փայտեայ անօթները գործածութիւնը տարած-
ված է աւելի շատ այն երկրներում, որտեղ
գինեգործութիւնը աւելի է զարգացած, իսկ մեզ
մօտ աւելի դուր են ածում կաւէ ամանները:
Եւրոպայում նոյնպէս կային և դեռ կան
կաւէ անօթներ: Դրանք շարժական չեն, այլ ոչ
այլ ինչ են, եթէ ոչ մի սենեակի, որի յատակը
և 4 պատերը որոշաւ քանակութեամբ կաւով են
պատած:
Կաւէ անօթները անյարմար են գործածու-
թեան համար, որովհետեւ նրանք քիմիական ազ-
դու են գինու թթւութեան վրայ, իսկ թթւութեան
գինու դիմացկունութեան ամենամեծ ստոր-
բերից մէկն է:
Փայտեայ անօթները այդ մասնակար յատկու-
թիւնները չունեն, և բացի այդ դեռ ունեն մի
քանի նշանաւոր առաւելութիւններ:
Փայտեայ անօթները շինում են կաղնու և չա-
զանակի տախտակներից, իսկ այդ փայտերը,
ամենամեծ առաւելութիւնը շատ հարուստ է դառնութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

VIII

Մի քանի անգամ իմ մէջ ցանկութիւն է առաջ
եկել զբնութիւնը թիւրքաց կնոջ մասին, և դուրս
բերելու նրա այժմեան դրութիւնի մի քանի
ընդհանուր գծեր:
Բայց ամեն անգամ ես, այսպէս ասած, յիշե-
մ զի այդ ցանկութիւնը, զգալով, որ բաւա-
կան թերի են իմ ձեռքի տակ եղած այն տեղե-
կութիւնները և նիւթերը, որոնց վրա պէտք է
հիմնել իմ դատողութիւնները և եզրակացութիւն-
ները:
Ես ինքս ինչ կը մեղադրեի, և ընթերցողին էլ
իրաւունք կուտանայ ինչ մեղադրելու, եթէ մեր
զրապատմութեան մէջ լինէին նիւթեր թիւրքաց
կնոջ մասին, բայց այսպէս թէ այնպէս անտես
առնել, կամ չուսումնասիրել այդ նիւթերը:
Սակայն դժբաղդութիւնը հենց նրանումն է, որ
ամբողջ հայոց նորագոյն զրապատմութեան մէջ չը
կայ թիւրքաց կնոջ դրութեան բարեկից ու-
սումնասիրութիւն, չը կան գէթ հոգի նիւթեր
նրա կենցաղավարութեան և հասկացողութիւնների
ընտանեկան և հասարակական ձգտումների մա-
սին և եղածների էլ վերին աստիճանի թերի են
և կցկուտը:
Թիւրքաց կինը չէ ուսումնասիրված: Նրա
վրա, արեւելեան անհոգութեամբ, ոչ ոք ուշադրու-
թիւն չէ դարձրել: Ոչ մի ճանապարհորդ, ոչ մի
գրող, ոչ մի հետազոտող նրան, ինչպէս ասում
են, մարդու տեղ չէ դրել:
Ուշադրութեամբ թերթում էք այն բոլոր հատոր-
ները, որոնք վերաբերում են թիւրքաց Հայաստա-
նին, մէկ-մէկ աչքի էք ածելով ամեն մի հարիւ-
րաւոր թղթակցութիւնները, որոնք գրված են
թիւրքաց Հայաստանից և Կ. Պոլսի զանազան

որը կարող է վերլուծվել գինու մէջ և աւելաց-
նել գինու սեփական գաղտնիքի քանակութիւնը:
Տակաւունքի պատերի ծակոտիկները աւելի դի-
ւաւատալի են օդի մասնիկների համար, որով և
գինին աւելի միջոց է ունենում ենթարկվել օդի
ազդեցութեան, մաքրվել, և աղտոտանալ:
Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ փայտեայ
անօթները աւելի թանկ են նստում, քան կաւէ:
Փայտեայ անօթները լինում են երկու տեսակի
կիսատակաւ (cuve-chaud) և տակաւ:
Ինչպէս ասեցինք, կիսատակաւները և տակաւ-
ները շինում են կաղնու կամ չազանակի փայտից:
Նախապէս պատրաստած տախտակները դարձում
են մի ծածկի տակ (չարգան) և այդտեղ չորաց-
նում են 1—2—3 տարի և տակաւները ու
կիսատակաւները շինում են միանգամայն լաւ
չորացրած տախտակներից:
Կիսատակաւների ձևի մասին դադարի մաս-
նաւոր համար հարկաւոր է երեւակայն մի վերջո
գլխի վրա դրած, որի յատակը պոկած է, իսկ
բերանը կալած: Կամ աւելի, լաւ վերջոք մի
կոնաձև մարմին, մի մեծ չաքարի գլուխ, կոտրե-
ցէք վերին սուր մասը և ցածի մասը կը ներ-
կայացնի մի կիսատակաւ:
Կիսատակաւների կողքի պատը ստացվում է
միմեանց մօտ ամուր կերպով կայացած և սեղմած
տախտակներից, որոնք դրանց սեղմված են փայ-
տեայ կամ երկաթեայ շրջանակներից: Հիմքը
շրջանակաձև է և դրի կողմից զոգաւոր է. վեր-
ջին պայմանը անհրաժեշտ է, որովհետեւ յատակի
վրա ահագին ճնշում է աղբում, իսկ յատակը
քանի դրանք ներս ուռած լինի այնքան ամուր և
դիմացկուն կը լինի:
Կիսատակաւները իրանց ստորին մասում
ունենում են մի դուռը, որով հնչեղանում են

պարբերական հրատարակութիւնների մէջ, և այդ
բոլորի մէջ մի ամիսի, մի շնորհով ուսումնասի-
րութիւն չէք գտնում թիւրքաց կնոջ մասին:
Հայ թղթակիցը, հայ ճանապարհորդը, որ մեծ ու-
շադրութեամբ ժամեր է գործ դնում կարգաւոր
զանազան աւերակների (նայր աւերակների սիրա-
հար է) յիմար արձանագրութիւններ, կամ գերեզ-
մանագրերի տապանագրերը, որ ամենամեծ ոգե-
ւորութեամբ նկարագրում է եկեղեցիների դռները,
վարդապետների վերաբերմանը և դպրոցական
խաչկիսաների հազար անգամ նկարագրված փա-
լակաւն և ճիւղտները, մի սարսափելի սխալա-
տիկ հակակրօնութեամբ է վերաբերվում դէպի կեն-
դանի կեանքը, դէպի այդ կենդանի կեանքի կեն-
դանի ներկայացուցիչները, զլանալով մի քանի
կոտոր աւելու հայ ընտանիքի ներքին կեանքի, այդ
կեանքի նեղուկի՝ կնոջ մասին, կարծէք թէ մեր
կեանքի ամբողջ խորհուրդը միշտ վերացական
նիւթերով հետաքրքրվին է, և իրական աշխար-
հից խոյս տալը... Չարմանալի չէ ուրեմն, որ
թէ և այդքան տարի է խօսում ենք թիւրքաց կնոջ
կեանքի ուսումնասիրութեան մասին, բայց
այնպէս չը գիտենք, որինակ, թէ ինչպէս է ապ-
րում կինը թիւրքաց Հայաստանում, թէ ինչ դեր
է կատարում նա Վանի, Էրզրումի, Մուշի նման
քաղաքներում, կամ թէ ինչ աշխարհայեցողութիւն
ունի այնտեղ կինը ընտանիքից դուրս, մի փոքր
աւելի լայն ասպարէզի վրա:
Մեր հատարակութիւնը ոչինչ գաղափար չունի
այդ և այդպիսի կարևոր հարցերի մասին, թէ և
նոյն հատարակութիւնը թիւրքաց Հայաստանին
վերաբերեալ զանազան գրքերից և թղթակցու-
թիւններից լաւ գիտէ, թէ, օրինակ, Վանի նա-
հանգում քանի աւերակ վայել կայ, կամ թէ Կ.
Պոլսի ազգային ժողովում հարիւր երեսիփխանե-
քը քանի հարիւրական ճառեր են խօսում, և կամ
թէ պատրիարքը քանի անգամ այցելութեան զը-
նաց այս և այն փաշային, և այս ինչ դպրոցում
ինչ շրջաբերթ ճառեր ասվեցան այս և այն ազ-
գային գործիչի առաջ...

մաքրելու գործը, բայց շատ անգամ այդ դուռը
չէ լինում, ամենամեծ փոքրիկ կիսատակաւնե-
րում:
Կիսատակաւների մեծութիւնը շատ զանազան
է լինում—100—500—2000 վեզրանոց կիսատա-
կաւներ կան:
Տակաւն էր: Տակաւների ձևը շատ յայտնի
է, դրա համար էլ բաւականաճառում ենք ասել, որ դա
մի գլան է, միջին մասը ուռած: Տակաւները
ունեն 2 հիմք և մի կողքի պատ: Հիմքերը
այնպէս են կազմված, իսկ կիսատակաւներինը,
կողքի պատերը ստացվել են միմեանց մօտ ա-
մուր կերպով կայացած խիտ կերպով դրանց փայ-
տեայ և երկաթեայ շրջանակներով սեղմած տախ-
տակներից, որոնք ուղիղ չեն, այլ միջից փոս ըն-
կած: Ուռած մասերը միանալով կազմում են
տակաւի ուռած մասը: Տակաւները լինում են
մեծ և փոքր: Փոքր տակաւները կոչվում են այն
տակաւները, որոնց մեծութիւնը 2—10—50 վեզ-
րոյից չէ անցնում, իսկ մեծ տակաւները 200—
500—1000 վեզրանոցներ են:
Կան տակաւներ, որոնք երկար են, կան տա-
կաւներ, որոնք մօտենում են խորանարդին, այսինքն
երկու հիմքերի հեռաւորութիւնը հաւասար է լի-
նում ուռած մասերի ամենահեռաւոր կէտերի մէջ
գտնված տարածութեանը: Մեծ տակաւները, բո-
լորովին, որովհետեւ դրանք աւելի ամուր, դիմաց-
կուն են, քան երկարները:
Երկար տակաւները 2 կարգից աւելի իրար
վրա չէ կարելի չարել, այն ինչ միւս տեսակից
ճրանայի զանազան գինեւորութիւն կը տեսնեք
3—4—5 չաքը իրար վրա: Տակաւները ունենում
են մի անցք իրանց ուռած մասում և դրա
դիմացի մասում հիմքերից մէկի վրա մի ծորակ

Սակայն չը քրքրենք հին ցաւերը, և բաւակա-
նանքը կը ծածկու...
Թիւրքաց Հայաստանի ներքին նահանգներում,
ուր դեռ տիրապետում է նահապետական
կեանքը, հայ կինը ընտանիքի մէջ, նոյն իսկ հայ-
կական ընտանիքի մէջ տիրապետող ընդհանուր
աշխարհայեցողութեան հիման վրա, պահպանել է
բաւական պատուաւոր դիրք: Նա ընտանիքի ան-
հրաժեշտ անդամն է: Նա ներկայացուցիչ է ըն-
տանեկան սրբութեան և խիտ բարոյականութեան
թիւն: Նա աշխատող ձեռք է, և բացի աշխա-
տող ձեռք լինելուց՝ նա ներկայացուցիչ է տեղա-
կան արդիւնաբերութեան շատ ճիւղերի, տեղա-
կան բնութեան արդիւնաբերելով այնպիսի ձեռա-
գործներ, որոնք բաւական նախանձելի անուն են
տուել Հայաստանի մի քանի գաւառների իգա-
կան սեռին: Նրանց գեղեցիկ ձեռագործները,
նրանց հուտ տնտեսութիւնը, նրանց աշխատա-
ւոր ընտանիքները ճիշդ որ մի նախանձելի
յատկանիչ է եղել հայ կնոջ համար, և թաղման
չէ մնացել նոյն իսկ շատ օտար ճանապարհորդ-
ների աչքից:
Սակայն նահապետական, գիւղական այդ շրջա-
նից դուրս, ուր, կրկնում ենք, ինչպէս շատ տեղ
այնպէս և թիւրքաց Հայաստանում, հայ կինը
ներկայացնում է իրանից մի աշխատող, ընտանե-
կան օջախի պաշտպան և նրա ներքին բարոյա-
կան կազմակերպութեան ներքու, այդ նահապե-
տական-գիւղական շրջանից դուրս, ասում ենք,
քաղաքներում և քաղաքային կեանքի մէջ նոյն հայ
կինը մեղ ներկայանում է արդէն բաւական տար-
բեր կերպարանքով, բաւական աշխուրդված, և
ընդհանուր առմամբ, աննախանձելի դրութեան
մէջ: Մահմետական աշխարհի այնպիսի քաղաք-
ներում, որոնք անձնաւորութիւնը զբոյժ հաս-
ցնող հայեցակէտը, և կնոջ իբրեւ մի դուռնու-
թեան առարկայ, տղամարդու ձեռք յանձնելու
ձգտումը բաւական տիրապետել է քաղաքային
հայ ընտանիքի վրա, և ահա այդ պատճառով

կամ դուռը: Վերին անցքը տակաւները լցնելու
և դարդակելու համար է, իսկ ստորինը երբեմն
դարդակելու, երբեմն մաքրելու:
Քանի տակաւները փոքր են, այնքան նրանց մէջ
պատրաստած գինին աւելի շուտ է պարզվում և
շուտ ծրթվում, բայց միւս կողմից պէտք է աւե-
լացնել, որ դրանք անհամեմատ թանկ են նրա-
տում:
Ճրանայում այնտեղ, որտեղ շատ են արտա-
դրում, բայց հասարակ տեսակն է, գործ են
ածում 500—1000—2000 վեզրանոց տակաւներ,
իսկ այնտեղ որտեղ լաւ տեսակի գինիներ են
արտադրում, գործ են ածում մանր տակաւներ:
Օրինակ, Բօրզոյում և նրա շրջակայքում, նոյնպէս
Բուրզոյում գործ են ածում 15 վեզրանոց
տակաւներ (228 ֆրանսական լիտր), երբեմն
էլ աւելի քիչ 7—8 վեզրանոց (115 ֆրանսական
լիտր):
Հարաւային ճրանայում որտեղ միայն հասա-
րակ տեսակի գինի է արտադրվում, կը հանդի-
պէք այնպիսի տակաւների, որոնց ձաւաւի
բարձրութիւնն է 3—5 արշին:
Բայց անցեալ տարի Պարիզի ցուցահանդիսի
երկրագործական բաժնի գինեգործական մասում
առիթ ունեցանք տեսնել մի հակադաս տակաւ,
որի ձաւաւի զրած էր «Պարսկականութիւն» 800
հեկտոլիտր, որը մօտաւորապէս հաւասար է 4000
վեզրոյի: Ի հարկէ այսպիսի տակաւներ գործ չեն
ածում սովորաբար: Վարպետի մօտից ստացած
կիսատակաւները և տակաւները անմիջապէս չէ
կարելի գործածել, նախապէս պիտի պատրաստել
հետեւեալ կերպով: 2—5 օր չարունակ պէտք է
լցնել սառ մաքուր ջրով, երբեմնապէս ջուրը փո-
խել, դրանից յետոյ մի անգամ էլ տաք ջրով լց-
նել և 2 ժամից յետոյ դարձաւել և բացի այդ մի

թիւրքաց Հայաստանի քաղաքներում հայ կինը
մեղ ներկայացնում է մի խեղճ պատկեր: Նա
փակված է չորս պատերում: Նա այլ ևս չէ իր
տղամարդի տնտեսութեան անհրաժեշտ սիւներից
մինը: Նա մեծ մասամբ մի դարձ է տան հա-
մար, մի անդամ է բայ, որը առանց տղամարդու
անհասկանալի է, և որն առանց տղամարդի դը-
ժուար թէ կարողանայ գոյութիւն ունենալ, կամ
իբրեւ մի անհատ, և կամ իբրեւ մի քաղաքա-
ցիական մարմին... Երկրի ընդհանուր օրէնքնե-
րը աւելի են ամրապնդել այդ դրութիւնը, որի
մէջ օրից օր աւելի նսեմանում և աւելի թուա-
նում է ամբողջ իրական սեռը...
Թիւրքաց Հայաստանում, քաղաքային կեանքի
մէջ, կնոջ համար ընտանիքից դուրս ուրիշ աշ-
խարհ չը կայ: Ինչ է կատարվում ընտանիքից,
կամ մի քանի հարկանների շրջանից դուրս, այդ
չը գիտէ կինը: Եւ նա չէ էլ ուղում գիտեցաւ:
Իսկ իրաւունք էլ չունի գիտեցաւ: Ինչ նրա
գործն է հետաքրքրվել, թէ ինչ է կատարվում
քաղաքից քիչ հեռու, կամ թէ ինչ հասարակա-
կան խնդիրներ են արժանաւորվում քաղաքի մէջ,
կամ ինչ մարդիկ և ինչ հրամաններ են գալիս Կ.
Պոլսից, կամ ինչ նորութիւններ են տեղի ունե-
նում Կ. Պոլսում և կամ Կ. Պոլսից եկած գրքերը
և լրագիրները ինչ են ասում... Ինչ կնոջ խելի
բանն է,—ասում են էֆէնդի տղամարդիկ,—խօ-
սել կամ հետաքրքրվել նրանով, թէ ինչպիսի
մարդ է նոր փաշան, նոր առաջնորդը, կամ ինչ
նոր մարդիկ են եկել դպրոցը, կամ ով է այս
տարվայ վարժուհին, վարժապետը: Վերջապէս ինչ
կնոջ խելի բանն է խօսել իր էրիկի հետ այն
մասին, թէ ովքեր պէտք է ընտրվեն գա-
ւառական ժողովի համար, և կամ ինչու
գաւառական ժողովը պիտի լուծվի և առաջ-
նորդը պիտի հեռանայ: Նոյն իսկ մեծ քա-
ղաքներում հայ կինը հետևելով մահմե-
տական կնոջը, ընդունակ չէ գտնել իրան հետա-
քրքրելու այդ և այդ տեսակի հաղորատու հարցե-
րով, և տղամարդը իրաւունք էլ չէ տալիս նրան

1872

—	երկբորդ	—	218	—
—	երբորդ ալի. կալ. բ.	—	211	» 50
Պետական.	երկաթուղային ընկտա	—	101	»
5 ¹ / ₂ 0	ընտա	—	103	» 75
5 ⁰ / ₀	նեղքին փոխառութիւն	—	88	» 72
5 ⁰ / ₀	գրաւ. թղթ. ալի. կալ. բանկի	—	99	» 87
4 ⁰ / ₀	վկայքի. գիւղ. հող. բանկի.	—	103	» 75
4 ¹ / ₂ 0	գրաւական թղթեր կալուած.	—	—	—
—	փոխ. կրեդիտ. ընկեր.	մտալ.	—	»
—	—	թղթադ.	97	» 87
Պետերբուրգի	քաղաքային կրեդիտ.	—	—	—
—	ընկերութեան օբլիգացիները.	—	96	» 50
Մոսկուի	քաղաք. օբլիգացիաներ.	—	95	» 50
Օղէսալի	—	—	96	»
Թիֆլիսի	—	—	—	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	—	—	»
—	Գուխայիսի	—	—	»
Ս. Պետերբուրգի	բորսայի արամադրութիւնը	—	—	»

հանդարտ է:

ԴՊՐՈՑ—ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՀԱՅՈՒՆԷՍՑ ԲԱՐԵՂՈՐՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՆԸ յայտնում է ի գիտու-
հայ հասարակության, որ աշակերտուհիների ընդունելութիւնը ս. Նշան եկեղե-
ն—Ճիսկան օրիորդաց միության ղալըցում սկսվում է օգոստոսի 21-ից և կը
մինչև սեպտեմբերի 1-ը: 1—3

Հարկաւոր է մի վարժարանի, ձեռագործութեան, գծագրութեան և թուաբանութեան
ըր շարժական 18—20 դաս: ռոճիկ 400 ռուբլի: Եթէ տանձնի և աւագ վար-
ձու պատօնը՝ ռոճիկը կը լինի 500 ռուբլի: Հարկաւոր է և մի վարժարանի՝ երգե-
թեան համար, ռոճիկը 500 ռուբլի: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբա-
նար:

1—4

3—3

Թ Ի Յ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն

91-ն Օգոստոսի 1890

Дозволено цензурою, Тифлисъ 15 Августа 1890 г.

Типографія Канцелярії Главнонач. Гражд. час. на Кавк., Лорист-Меликовск. ул. д. 83